ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՀՈՒԼԻՍԻ 2018թվականի N 31-Ա

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Ազդարարման համակարգի մասին>> օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թվականի մարտի 15-ի N272-Ն որոշման N1 հավելվածի 1-ին կետի,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝

որոշում եմ

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ալվարդ Վաղարշակի Խաչատրյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավանի համայնքապետարանի ազդարարման համար պատասխանատու անձ:
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավանի համայնքապետարանի ազդարարման համար պատասխանատու անձին՝ ապահովել Հայաստանի Հանրախպետության կառավարության 2018թվականի մարտի 15-ի <<Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման օրինակելի ձևը,ինչպես նաև ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը սահմանելու մասին>> N272-Ն որոշմամբ սահմանված լիազորությունների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել Կոտայքի մարզի Հացավան համայնքի ղեկավարի հունիսի 27-ի <<Ա.Կարապետյանին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավանի համայնքապետարանի ազդարարման համար պատասխանատու անձ նշանակելու մասին>> N 29-Ա որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ

2018թ. հուլիսի 06
գ.Հացավան